

Այս շինութեան համար մեծ ծախք եղած է, զոր հայթայթած է Ալթունենց Խոճան կամ Զէլէպի Մարխասը, շատ ծանօթ անուն մը Վանի տարեգրութեանց մէջ:

Տեսնուեցաւ արդէն, թէ 1648 Ապրիլ 2ի անդ և սարսափելի երկրաշարժէն յետոյ՝ անիկա նորոգած էր Վարազայ Ս. Աստուածածին եկեղեցին (Առաքել Դաւրիթեցի, էջ 494):

Իսկ Անցի Վասպուրական Աւխարհի հաւաքածոյին մէջ կը կարդանք, թէ 1651ին «պիղծն Զօմար քալանեաց զՎարազ եւ զսուրբ Նեան տարաւ ի Խօւսապ. եւ յես չորս տարոյ բերին զսուրբ Նեան ի Բաղան Վան եւ եղին ի Տիրամայր եկեղեցին ձեռամբ խօջայ Մարխասին» (Դիւան, Ժ. էջ 104): Յարուսթիւն Խալֆայեան նոյն թուականին տակ աւելի որոշ կը գրէ՝ «անիծեալն Զօմար եւ Խօւսապայ պարոնն քալանեցին Վարազայ վանքն եւ սուրբ Նեանն եւս գերի տարան, զոր Մարխաս Զալապին ազատեալ եքեւ զկնի չորս ամաց եւ եղին յեկեղեցին Տիրամօրն» (Դիւան, Ժ. էջ 125): Առաքել Դաւրիթեցի ալ պատմած է այս անցքերը շատ մանրամասն (տես էջ 494 - 521). աւելորդ կը դատեմ իր վկայութիւնը ևս մէջ բերել հոս:

Այս առթիւ նոյն պատմագիրը կը յիշատակէ, թէ «այր ունի երեւելի եւ բարեպաշտն Բրիստոնեայ ի խօջայից Բաղաբին Վանայ, որ է սա ինքն Խանեց խօջայ Թումայի որդին, որոյ անունն եւ Մարխաս Զալապի» ինչ ջանքեր ըրած է՝ փրկելու համար Վարազայ Ս. Նշանը, զոր վերջապէս կրցած է ազատել 1665ին և բերել զեռեղել քաղաքին Տիրամայր անուանեալ եկեղեցին (Դաւրիթեցի, էջ 521):

Այս Մարխաս Զէլէպին ցեղակից էր այդ ժամանակին ամէնէն ազդեցորդ Հայուն՝ վանեցի Խոճա